ԿԱՐԵՆ ՓԱՎԼԵԻԱՆՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու

ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՋՈՐՔԵՐԻ ՀԱՅԱՋԳԻ ՋԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ

Գիտության եւ տեխնիկայի շարունակական զարգացումը ԺԹ. դարի վերջին եւ Ի. դարի սկզբին իր անմիջական ազդեցությունն ունեցավ նաեւ ցարական Ռուսաստանի զինված ուժերի վրա: Ռուսական կայսերական բանակում Ի. դարի սկզբին աննախադեպ առաջընթաց գրանցվեց նաեւ հատուկ զորատեսակներից մեկում՝ տեղագրական զորքերում:

Տեղագրական զորքերի կազմավորումից ի վեր դրանք ենթարկվել են բազմաթիվ փոփոխությունների, պատմական տարբեր ժամանակահատվածներում վերջիններս հանդես են եկել տարբեր տեսքով եւ իրականացրել են տվյալ պահի համար անհրաժեշտ առաջադրանքներ: Ռուսաստանի զինված ուժերի կազմում տեղագրական զորքերը ծնունդ են առել ԺԸ. դարի սկզբին եւ ներառված են եղել Գլխավոր շտաբի կազմում: Սկզբում այդ մասնագետները իրականացրել են միմիայն քարտեզագրման աշխատանքներ: Սակայն, Ռուսաստանի առջեւ ծառացած նոր մարտահրավերներով պայմանավորված, արդեն 1822 թ. ռուսական զինված ուժերում ձեւավորվեց ռազմական տեղագիրների կորպուսը, որին վերապահված էր իրականացնելու արդեն ծրագրային տեղագրական աշխատանքներ: Կորպուսը նշված տեսքով գոյատեւեց մինչեւ 1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած հայտնի իրադարձությունները, որոնց արդյունքում վերջնականապես ավարտվեց ցարական բանակի պատմությունը:

Խաղաղ պայմաններում տեղագրական կորպուսի սպաները իրականացրին բազմաթիվ տեղագրական նկարահանումներ եւ գեոդեզիական աշխատանքներ, իսկ պատերազմական պայմաններում՝ մարտական գործողությունների լայնածավալ տարածություններում, շատ հաճախ բնակլիմայական դժվար պայմաններում արդյունավետորեն իրականացրին բազմաթիվ տեղահուզումներ եւ տեղադիտումներ:

Տեղագրական զորքերի անձնակազմը հիմնականում բաղկացած էր սպայական կազմից, իսկ տեղագրական զորքերի սպայական կազմը 1822 թ. սկսած պատրաստվում էր զինվորական-տեղագրական ուսումնարանում, որը ստեղծվել էր կադետական կորպուսների եւ ռեալական ուսումնարանների հիմքի վրա: Զինվորական-տեղագրական ուսումնարանը ուներ երկամյա կրթական համակարգ: Նրա ընդհանուր հաստիքային կազմը մեծ չի եղել. յուրաքանչյուր տարի ուսումնարանը տվել է 20 շրջանավարտ: Այսինքն, ուսումնարանում միաժամանակ սովորել են թվով 40 յունկեր: 1910 թ. սկսած յունկերների թիվը հասցվեց 50-ի: Բացի նշվածից, ուսումնարանը յուրաքանչյուր տարի վերապատրաստման դասընթացներ էր անցկացնում նաեւ ռուսական զորքերից գործուղված սպաների համար:

Տեղագրական զորքերի բարձրագույն սպայական կազմը պատրաստվում էր Գլխավոր շտաբի Նիկոլաեւյան ակադեմիայի տեղագրական բաժնում: Ակադեմիայի շրջանավարտները դառնալու էին պետության համար անհրաժեշտ նկարահանման աշխատանքների ղեկավարներ եւ կազմակերպիչներ: Տեղագրական զորքերի բարձրագույն սպայական կազմը Նիկոլաեւյան ակադեմիան ավարտելուց հետո եւս 2 տարի ուսանում էր Պուլկովոյի Նիկոլաեւյան աստղադիտարանում, որտեղ հատուկ նրանց համար կազմակերպվում էին դասընթացներ:

Տեղագրական զորքերի համար լուրջ փորձություն էին ԺԹ. դարի վերջին ծավալված ռուս-թուրքական պատերազմները, որից ստացած դասերը ռազմական տեղագիրները օգտագործեցին արդեն Ի. դարի սկզբին՝ 1900-1901 թթ. դեպի Չինաստան կազմակերպված ռազմարշավի, ռուս-ճապոնական եւ Առաջին համաշխարհային պատերազմների ժամանակ:

Ի. դարի սկզբին Եւրոպայում եւ Հեռավոր արեւելքում քաղաքական իրավիճակի լարվածության պատճառով բոլոր մեծ եւ փոքր երկրների հետախուզական աշխատանքներ իրականացնող հատուկ ծառայությունների հետ միաժամանակ գործում էին նաեւ տեղագրական աշխատանքներ կատարող, քարտեզագրող, լուսանկարող, չափագիտական գործողություններ եւ հաշվարկներ իրականացնող տեղագրական զորատեսակներ:

ԺԹ. դարի վերջին եւ հաջորդ դարի սկզբին Ռուսաստանի զինված ուժերի պատրաստականության մակարդակի բարձրացման, տեղագրական զորքերի կայացման եւ ամրապնդման գործում արժեքավոր ներդրում կատարեցին նաեւ տեղագրական զորատեսակում ծառայող մի շարք բարձրաստիճան հայազգի սպաներ: Այդ սպաներից էր ցարական Ռուսաստանի զինված ուժերում 50 եւ ավելի տարիներ օրինակելի եւ անբասիր ծառայությամբ աչքի ընկած հայազգի գնդապետ Սամսոն Սերգեյի Զավրիեւը: Նա ծնվել է 1848 թ. հոկտեմբերի 11-ին: Կրթություն է ստացել տեղագրական թիվ 3 վաշտում: Ռուսաստանի զինված ուժերում ծառայության է անցել 1863 թ. ապրիլի 30-ին եւ ծառայության առաջին իսկ օրերից առանձնացել է իր բանիմացությամբ եւ որակական բարձր հատկանիշներով: Զավրիեւի օրինակելի ծառայությունը չի վրիպել հրամանատարության ուշադրությունից, եւ հայազգի զինվորականը 1870 թ. պարգեւատրվել է ոսկե ժամացույցով, իսկ 1872 թ. արժանացել է Ս. Ստանիսլավի 3-րդ աստիճանի շքանշանի: 1874 թ. հունվարի 1-ին Զավրիեւը ստացել է պրապորշչիկի, իսկ նույն թվականի սեպտեմբերի 3-ին՝ պոդպորուչիկի զինվորական կոչում: Տեղագրական զորքերում հայազգի սպայի կատարած աշխատանքները գրեթե միշտ գտնվել են հրամանատարության ուշադրության ներքո եւ գնահատվել են ըստ արժանավույն: Գերազանց եւ բարեխիղճ ծառայության համար Զավրիեւը 1876 թ. արժանացել է Ս. Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշանի, 1877 թ. վաղաժամկետ ստացել է պորուչիկի, իսկ նույն թվականի օգոստոսի 22-ին՝ նաեւ շտաբս կապիտանի զինվորական կոչում:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը ցարական Ռուսաստանի համար կանխատեսելի էր: Դրանով պայմանավորված՝ ռուսները մինչեւ պատերազմի ազդարարումը ձեռնարկել էին մի շարք նախապատրաստական միջոցառումներ: Որոշ պատճառներով, սակայն, պատերազմի հավանական թատերաբեմի վերաբերյալ տեղեկատվական ապա-

հովումը թերի էր, եւ ռուսական հրամանատարությունը այդ խնդիրը լուծեց հենց ռազմական գործողությունների ժամանակ: Պատերազմի մասնակից ռուսական տեղագրական խմբերը, դժվարագույն պայմաններում իրականացնելով տեղադիտման եւ տեղաչափման աշխատանքներ, համալրեցին առկա տեղեկատվական բացը: Այդ գործողություններին մասնակցած զինվորական տեղագիրներից էր նաեւ Ս. Ս. Զավրիեւը, որն իր անձնուրաց ծառայության համար 1877 թ. արժանացել է Ս. Աննայի 3-րդ աստիճանի շքանշանի՝ սրերով եւ ժապավենով հանդերձ, իսկ 1878 թ.՝ Ս. Ստանիսլավի 2-րդ աստիճանի շքանշանի՝ սրերով հանդերձ:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում Ռուսաստանին միացվեցին Կարսի, Արդահանի եւ Բաթումի շրջանները: Կարճ ժամանակահատվածում անհրաժեշտ եղավ գծագրել ռուս-թուրքական նոր սահմանային շրջանները: Ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Թուրքիայի տեղագրական ծառայությունները ձեռնամուխ եղան իրականացնելու այդ աշխատանքները: Ռուս-թուրքական սահմանային շրջաններում եւ բուն թուրքական տարածքներում գործող աշխատանքային խմբերի կազմում էր նաեւ հայազգի սպա Ս. Ս. Զավրիեւը, որի կատարած քարտեզագրումները արժեքավոր եւ անհրաժեշտ տեղեկություններ էին ոչ միայն ռուսների, այլեւ թուրքերի համար: Խաղաղ պայմաններում կատարված այդ աշխատանքների համար Զավրիեւը 1883 թ. արժանացել է թուրքական «Մեջիթիե» 3-րդ աստիճանի շքանշանի: 1886 թ. փետրվարի 28-ին հայազգի սպան դարձյալ որպես պարգեւ ստացել է կապիտանի զինվորական կոչում: 1889 թ. օգոստոսի 30-ին ստանալով փոխգնդապետի կոչում՝ Զավրիեւը շարունակել է բարեխղճորեն կատարել ռուս-թուրքական սահմանների ճշգրտման եւ քարտեզագրման աշխատանքները եւ արժանացել է ինչպես ռուսական, այնպես էլ թուրքական պարգեւների: Բարեխղճորեն կատարված աշխատանքների համար 1891 թ. նա արժանացել է թուրքական «Օսմանիե» 3-րդ աստիճանի շքանշանի, 1894 թ. արժանացել է Ս. Աննայի 2-րդ աստիճանի շքանշանի, իսկ 1903 թ. դեկտեմբերի 6-ին՝ գնդապետի զինվորական կոչման[1]: 1898 թ. օգոստոսի 1-ից Զավրիեւը զբաղեցրել է Կովկասյան ռազմական օկրուգի ռազմական-տեղագրական բաժնի նկարահանումներով զբաղվող բաժանմունքի պետի պաշտոնը[2]: Այդ պաշտոնով էլ հայազգի գնդապետը մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին[3]: Զավրիեւը ամուսնացած է եղել, ունեցել է 6 երեխա[4]:

Ռուսաստանի զինված ուժերում իրենց ինքնանվեր ծառայությամբ աչքի են ընկել նաեւ հայազգի Կուսիկով գերդաստանի որոշ ներկայացուցիչներ[5]: Նրանցից փոխգնդապետ

1 Տե՛ս "Списокъ полковникамъ по старшинству", С. Петербургъ, 1905, էջ 881. "Списокъ полковникамъ по старшинству", С. Петербургъ, 1913, էջ 56. "Списокъ полковникамъ по старшинству", С.Петербургъ, 1914, էջ 28:

2 Տե՛ս "Общий списокъ офицерскимъ чинамъ Русской императорской армии", С.Петербургъ, 1909, էջ 100:

3 Տե՛ս "Списокъ полковникамъ по старшинству", Петроградъ, 1916, էջ 3:

4 Տե՛ս "Списокъ", С.Петербургъ, 1905, էջ 881:

5 Սերգեյ Նիկոլայի Կուսիկովը պոռուչիկի կոչումով ծառայում էր Թիֆլիսում տեղակայված Կովկասյան գրենադերական հրետանային բրիգադում, իսկ նրա եղբայրը՝ Գեորգի Նիկոլայի Կուսիկովը պոդպորուչիկի կոչումով ծառայում էր Ախալցխայում տեղակայված ռուսական 20-րդ հրետանային բրիգադում: Տե՛ս "Общий списокъ офицерскимъ чинамъ Русской императорской армии", С. Петербургъ, 1909, էջ 633. "Общий списокъ офицерскимъ чинамъ Русской императорской армии", С. Петербургъ, 1910,

Նիկոլայ Սարգիսի (Սերգեյ) Կուսիկովը ռուսական բանակի տեղագրական կորպուսում ծառայելով շուրջ 55 տարի՝ զգալի ավանդ է ներդրել տեղագրական զորքերի ամրապնդման գործում: Հայազգի սպան ծնվել է 1844 թ. դեկտեմբերի 12-ին: Կրթություն է ստացել զինվորական տեղագրական ուսումնարանում: Զինվորական ծառայության է անցել 1859 թ. հունիսի 8-ին: Կուսիկովը մասնակցել է 1868-1874 թթ. ռուս-թուրքական պատերազմին՝ այդ ընթացքում 1868 թ. օգոստոսի 30-ին ստանալով պրապորշչիկի, 1870 թ. ապրիլի 3-ին՝ պոդպորուչիկի, 1873 թ. մայիսի 11-ին՝ պորուչիկի (որպես պարգև) զինվորական կոչում: Օրինակելի ծառայության եւ ռազմական գործողություններում առանձնանալու համար հայազգի սպան 1874 թ. արժանացել է նաեւ Ս. Ստանիսլավի 3-րդ աստիճանի շքանշանի՝ սրերով եւ ժապավենով: Խաղաղ պայմաններում Կուսիկովի ծառայությունը նույնպես եղել է օրինակելի, ինչով պայմանավորված նա ունեցել է ծառայողական առաջխաղացում եւ 1877 թ. մարտի 15-ին ստացել է շտաբս կապիտանի զինվորական կոչում: Կարճ ժամանակ անց նա ստացել է նաեւ բարձրագույն պարգևներ՝ 1878 թ. արժանանալով Ս. Աննայի 3-րդ, իսկ 1884 թ.՝ Ս. Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշանների:

Կուսիկովին վստահված ցանկացած աշխատանք կատարվել է ամենայն պատասխանատվությամբ եւ բարեխղճորեն, ինչով պայմանավորված հայազգի սպան գրեթե միշտ գտնվել է ուշադրության կենտրոնում: 1886 թ. մարտի 15-ին Կուսիկովը ստացել է կապիտանի, իսկ 1890 թ. օգոստոսի 30-ին փոխգնդապետի զինվորական կոչում՝ 1890 թ. արժանանալով նաեւ Ս. Ստանիսլավի 2-րդ աստիճանի շքանշանի: 1890 թ. օգոստոսի 8-ից մինչեւ Առաջին համաշխարհային պատերազմը Կուսիկովը ծառայելով Կովկասյան ռազմական օկրուգում՝ կատարել է քարտեզագրման եւ վիմատպական աշխատանքներ, որոնք արդյունավետ են եղել եւ համալրել են ռուսական զինված ուժերի տեղեկատվական բազան: Տքնաջան եւ անձնվեր աշխատանքի համար 1895 թ. Կուսիկովը արժանացել է Ս. Աննայի 2-րդ աստիճանի շքանշանի[6]:

Փոխգնդապետ Վախտանգ Պավելի Ջալալյանցը (Վախտանգ Տեր-Պողոսի Հասան-Ջալալյանց) ցարական զինված ուժերում իր ծառայության 35 եւ ավելի տարիների ընթացքում տեղագրական-քարտեզագրական լայնածավալ եւ կարեւոր աշխատանքներ կատարեց հատկապես Մերձամուրյան զինվորական շրջանում:

Վախտանգ Պավելի Ջալալյանցը ծնվել է 1856 թ. հունվարի 27-ին: Կրթություն է ստացել Թիֆլիսի քաղաքային սեմինարիայում, հողաչափական եւ տեղագրական ուսումնարաններում: Ուսման ավարտից հետո ծառայության է նշանակվել Ռուսաստանի զինված ուժերի տեղագրական կորպուսում: Հայորդին զինվորական ծառայության է անցել 1877 թ. սեպտեմբերի 1-ին: 1879 թ. օգոստոսի 8-ին ստացել է պոդպորուչիկի, 1881 թ. օգոստոսի 30-ին՝ պորուչիկի, 1884 թ. օգոստոսի 30-ին՝ շտաբս կապիտանի, 1888 թ. օգոստոսի 30-ին՝ կապիտանի զինվորական կոչում: 1895 թ. օգոստոսի 13-ից հոկտեմբերի 31-ը գտնվել է պաշտոնաթող սպայի կարգավիճակում: Այնուհետեւ վերականգնվել է ծառայության եւ դարձյալ աչքի է ընկել օրինակելի եւ անբասիր ծառայությամբ: 1897 թ. մարտի 11-ից 1900

էջ 672:

6 Տե՛ս "Списокъ подполковникамъ по старшинству", С.Петербург, 1898, їз 182. "Списокъ подполковникамъ по старшинству", С.Петербург, 1913, էջ 1:

թ. հոկտեմբերի 26-ը եղել է Մերձամուրյան զինվորական շրջանի ռազմական տեղագրական բաժնի քարտուղարը եւ պահեստի ղեկավարը՝ այդ ընթացքում 1898 թ. ապրիլի 5-ին ստանալով փոխգնդապետի կոչում[7]:

ԺԹ. եւ Ի. դարերի սահմանագլխին արեւելքում ծավալված բարդ քաղաքական իրադարձությունները վերլուծելով եւ Ճապոնիայի հակառուսական կողմնորոշումն ի նկատի ունենալով՝ ռուսական զինվորական գերատեսչությունը արեւելքում սպասվող վտանգի նախօրեին Մերձամուրյան զինվորական շրջանում կենտրոնացրեց Ռուսաստանի զինված ուժերի տեղագրական զորքերի լավագույն մասնագետներից շատերին: Այս մասնագետ զինվորականների թվում Վ. Պ. Ջալալյանցն առանձնանում էր մի շարք որակական հատկանիշներով: ԺԹ. դարի վերջին եւ հաջորդ դարի սկզբին Մերձամուրյան զինվորական օկրուգում Ջալալյանցի կատարած քարտեզագրումները, լուսանկարչական եւ վիմատպական աշխատանքները դարձել են այն կարեւոր եւ հիմնական փաստաթղթերը, որոնց վրա հենվելով՝ ռուսական զինված ուժերը Հեռավոր արեւելքում ծավալված գործողությունների ժամանակ իրականացրեցին իրենց զորաշարժերը:

1900 թ. հոկտեմբերի 26-ից 1904 թ. հունվարի 3-ը ներգրավված լինելով Մերձամուրյան զինվորական օկրուգում տարվող լայնածավալ քարտեզագրման աշխատանքներում՝ Ջալալյանցը 1900-1901 թթ. մասնակցել է նաեւ դեպի Չինաստան ցարական Ռուսաստանի կազմակերպած ռազմարշավին[8]: Փոխգնդապետ Ջալալյանցը 1904 թ. հունվարի 3-ին ստանձնել է Մերձամուրյան զինվորական շրջանի տեղագրական բաժնի լուսանկարչական-վիմատպական աշխատանքների ղեկավարի պաշտոնը: Նա մասնակցել է նաեւ 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմին: Պատերազմի տարիներին նա սխեմավորել եւ քարտեզագրել է մի շարք ռազմական գործողություններ ու զորաշարժեր: Նա հեղինակ է նաեւ բազմաթիվ փաստաթղթերի, որոնք Գլխավոր շտաբի եւ հրամանատարության պահանջով ստեղծվեցին հենց պատերազմի ընթացքում: Այդ շտաբային քարտեզների, սխեմաների եւ տեղեկատվական փաստաթղթերի շնորհիվ ռուսական զինուժը լայնարձակ տարածությունների վրա բազմաթիվ անգամներ արդյունավետ եւ ճշգրիտ զորաշարժեր իրականացրեց:

Ռուս-ճապոնական պատերազմի ավարտից հետո փոխգնդապետ Ջալալյանցը ծառայության է նշանակվել Ռուսաստանի զինված ուժերի տեղագրական կորպուսի Իրկուտսկի ռազմական տեղագրական ստորաբաժանումում: 1909 թ. ապրիլի 6-ին ստանձնելով Իրկուտսկի ռազմական տեղագրական բաժնի քարտեզագրողի պարտականությունները՝ մինչեւ Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբն այդ տարածքում իրականացրել է նշանակալի ծավալի տեղագրական-քարտեզագրական եւ վիմատպական աշխատանքներ:

---

7 Տե՛ս “Списокъ подполковникамъ по старшинству”, С. Петербург, 1912, їз 9. “Списокъ подполковникамъ по старшинству”, С.Петербург, 1913, էջ 6:

8 ԺԹ. դարի վերջին Չինաստանում ձեւավորվող հակառուսական տրամադրությունները շուտով վեր- աճեցին մի ապստամբության, որը պատմության մեջ հայտնի է «իխետուանների» ապստամբություն անվանումով: Չինաստանում օրեցօր ահագնացող այս շարժումը հնազանդեցնելու համար ցարական Ռուսաստանը 1900 թ. ռազմարշավ է կազմակերպում դեպի Մանջուրիա եւ իրականացնում է պատժիչ գործողություններ: Տե՛ս **Б. А. Романов**, Очерки дипломатической истории русско-японской войны 1895-1907, Москва-Ленинград, 1955, էջ 122:

Վախտանգ Ջալալյանցի ստեղծած տեղագրական փաստաթղթերից ու քարտեզներից շատերը եւ Առաջին աշխարհամարտի նախօրեին, եւ պատերազմի տարիներին օգտագործվեցին ինչպես Գլխավոր եւ բանակային շտաբներում, նույնպես եւ Ռուսաստանի ռազմական շրջաններում: Ռուսաստանի զինված ուժերում բարեխիղճ ծառայության համար հայազգի սպան արժանացել է բազմաթիվ պարգեւների եւ շքանշանների՝ այդ թվում Ս. Ստանիսլավի 2-րդ (1898 թ.), Ս. Աննայի 2-րդ (1902 թ.), Ս. Վլադիմիրի 4-րդ (1907 թ.) աստիճանի շքանշանների[9]:

ԺԹ. դարի վերջին եւ Ի. դարի սկզբին ռուսական կայսրության տեղագրական զորքերում ծառայող մյուս հայորդին, որի ներդրումը Ռուսաստանի ռազմագիտության ասպարեզում դարձյալ նշանակալից էր եւ կարեւոր, փոխգնդապետ Մելքոն Ավետիքի Նասիբյանցն էր: Նրա զինվորական կյանքի ամենաարդյունավետ շրջանը Թուրքեստանյան զինվորական շրջանում ծառայողական տարիներն էին, որոնց ընթացքում Տաշքենդի ատրոնոմիական դիտարանում Մ. Ա. Նասիբյանցը ֆիզիկայի եւ աստղագիտության բնագավառում կատարեց մի շարք նշանակալից գիտահետազոտական աշխատանքներ:

Մելքոն Ավետիքի Նասիբյանցը (Նասիբով) ծնվել է 1854 թ. հոկտեմբերի 12-ին: Կրթություն է ստացել նախ Թիֆլիսի քաղաքային զինվորական պրոգիմնազիայի հողաչափական դասարանում, այնուհետեւ զինվորական տեղագրական ուսումնարանում: Ուսման ավարտից հետո ծառայության է նշանակվել Ռուսաստանի զինված ուժերի տեղագրական կորպուսում: Նասիբյանցը զինվորական ծառայության է անցել 1874 թ. հունիսի 2-ին: 1878 թ. սեպտեմբերի 10-ին ստացել է պոդպորուչիկի, 1879 թ. օգոստոսի 30-ին՝ պորուչիկի, 1882 թ. օգոստոսի 30-ին՝ շտաբս կապիտանի զինվորական կոչում: Գերազանց եւ բարեխիղճ ծառայության համար հայազգի սպան 1883 թ. արժանացել է Ս. Ստանիսլավի 3-րդ, իսկ 1886 թ.՝ Ս. Աննայի 3-րդ աստիճանի շքանշանների: Օրինակելի ծառայության շնորհիվ ունեցել է նաեւ ծառայողական առաջխաղացում. 1887 թ. օգոստոսի 30-ին ստացել է կապիտանի կոչում: Անբասիր ծառայության համար Նասիբյանցը 1890 թ. արժանացել է Ս. Ստանիսլավի 2-րդ, իսկ 1895 թ.՝ Ս. Աննայի 2-րդ աստիճանի շքանշանների: 1895 թ. նա արժանացել է նաեւ «Բարձրագույն շնորհակալագրի»: 1897 թ. դեկտեմբերի 6-ին ստանալով փոխգնդապետի կոչում՝ ծառայության է նշանակվել Անդրկասպյան տարածաշրջանում: Հայազգի սպան ղեկավարել է այդ տարածաշրջանում տարվող դաշտային տեղագրական-գծագրական աշխատանքները, որոնք արժանացել են վերադասի բարձր գնահատականին: Գերազանց ծառայության համար 1899 թ. Նասիբյանցն արժանացել է Ս. Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշանի: 1906 թ. ապրիլի 21-ից մինչեւ Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը հայազգի փոխգնդապետը ծառայել է Թուրքեստանյան ռազմական տեղագրական բաժնում եւ Տաշքենդի տիեզերագիտական եւ ֆիզիկական աստղադիտարանում[10]:

Ռուսաստանի զինված ուժերի տեղագրական զորքերի կատարելագործման եւ

9 Տես "Списокъ подполковникамъ по старшинству", С. Петербург, 1912, їз 9. "Списокъ подполковникамъ по старшинству", С.Петербург, 1913, էջ 6:

10 Տես "Списокъ подполковникамъ по старшинству", С.Петербург, 1898, їз 714. "Списокъ подполковникамъ по старшинству", С.Петербург, 1912, ч.3, їз 8."Списокъ подполковникамъ по старшинству", С.Петербург, 1913, էջ 5:

ամրապնդման գործընթացին բուռն եւ ստեղծագործ աշխատանքներով մասնակցություն ունեցավ նաեւ Մելքոն Ավետիքի Նասիբյանցի երկվորյակ եղբայրը՝ փոխգնդապետ Գասպար Ավետիքի Նասիբյանցը: Գ. Ա. Նասիբյանցը ծնվել է 1854 թ. հոկտեմբերի 12-ին: Կրթություն է ստացել նախ պրոգիմնազիայում, ապա զինվորական տեղագրական ուսումնարանում: Ուսման ավարտից հետո ծառայության է նշանակվել Ռուսաստանի զինված ուժերի տեղագրական կորպուսում: Նա զինվորական ծառայության է անցել 1876 թ. սեպտեմբերի 20-ին: 1882 թ. օգոստոսի 30-ին ստացել է պոդպորուչիկի, 1884 թ. օգոստոսի 30-ին՝ պորուչիկի, 1887 թ. օգոստոսի 30-ին՝ շտաբս կապիտանի, 1890 թ. օգոստոսի 30-ին՝ կապիտանի զինվորական կոչում: Գերազանց եւ բարեխիղճ ծառայության համար Նասիբյանցը 1893 թ. արժանացել է Ս. Ստանիսլավի 2-րդ, իսկ 1897 թ.՝ Ս. Աննայի 2-րդ աստիճանի շքանշանների: 1904 թ. մարտի 28-ին ստանալով փոխգնդապետի կոչում եւ արժանանալով Ս. Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշանի՝ ծառայության է նշանակվել Կովկասյան զինվորական շրջանի ռազմական տեղագրական բաժնի նկարահանման բաժանմունքի պետի պաշտոնում: Որպես բաժանմունքի պետ՝ Նասիբյանցը մինչեւ Առաջին համաշխարհային պատերազմը համակարգել եւ ղեկավարել է մի շարք տեղագրական աշխատանքներ, կրկին արժանացել տարբեր պարգեւների[11]:

Ի. դարի սկզբին իր որակական հատկանիշների շնորհիվ ռուսական կայսրության տեղագրական զորքերում մեծ հեղինակություն էր վայելում նաեւ հայազգի կապիտան Պավել Պավելի Բեկխանովը: Նա ծնունդով Քութաիսի շրջանից էր, ազնվականական ընտանիքից[12]: 1900-1904 թթ. պոդպորուչիկի կոչումով ծառայել է Կովկասյան ռազմական շրջանի ռազմական տեղագրական բաժնում: 1910 թ. նույն պաշտոնում ծառայության ընթացքում ստացել է կապիտանի կոչում: Ապրել է Թիֆլիսում[13]:

Ռուսական կայսրությունում տեղագրական զորքերի ծնունդը եւ ռուսական բանակում հայերի կազմակերպված ծառայության սկիզբը տեղի է ունեցել պատմական նույն ժամանակահատվածում՝ ԺԸ. դարի 20-ական թվականներին: Կարճ ժամանակահատվածում հայերը ծառայության են անցել ռուսական կայսրության զինված ուժերի գրեթե բոլոր զորատեսակներում: Իրենց օրինակելի ծառայությամբ տարիների ընթացքում նրանք կարողացել են ձեւավորել բարի ավանդույթներ եւ ձեռք բերել մեծ համբավ: Հայազգի զինվորականության որակական բարձր հատկանիշներ ունենալու հանգամանքը եւս մեկ անգամ դրսեւորվել է ԺԹ. դարի վերջին եւ հաջորդ դարի սկզբին, քանզի պատմական այդ ժամանակաշրջանը ռուսական կայսրության համար ճակատագրական էր: Երկրի առջեւ ծառացած վտանգը դիմակայելու համար ռուսական կայսր Նիկոլայ Երկրորդը եւ զինվորական նախարարը ուղղակի պարտավորված՝ մի կողմ դնելով սպայի ազգային պատկանելության գործոնը, հատուկ զորատեսակներում ծառայության նշանակեցին գրագետ եւ բանիմաց զինվորականների: Այդ զինվորականներից Ս. Ս. Զավրիեւը, Ն. Ս. Կուսիկովը, Վ. Պ. Ջալալյանցը, Նասիբյանց եղբայրները ծանրակշիռ ներդրում կատարեցին ցարական Ռուսաստանի տեղագրական զորքերի ամրապնդման շարունակական գործընթացում:

---

11 Տես “Списокъ подполковникамъ по старшинству”, С.Петербург, 1912, ч.3, էջ 121:

12 Բեկխանովի հայրը կոլեգիալ խորհրդական էր:

13 Տես **Юрий Асадов**, 1000 офицерских имен в Армянской истории.Историко-биографические очерки, Пятигорск, 2004, էջ 193: